ինչ բաղում անցք անցին ի գլուխս. այլ եւ յոլով չարի եւ փորձանաց դիպայ ... ի յոլովից, մանաւանդ ի կարգաւորաց. զի ոչ ոք ճեաց, որ զիս ոչ ելեալ... եւ միշտ զայն ասէին. Է՞ր չնստար, այլ թողեր տեղտ ու գնացիր. այժմ դարձեալ եկիր. զի՞նչ կամիս. եւ թէ զի՞նչ չահ եղեւ քեզ այդչափ չրջիլդ, յերուսաղէմ գնալդ. թէ ասա էիր, վաղ քահանայ էիր. զի՞նչ օգտեցար... Դու չի պիտիս մեզ... զի մեք ունիմք քահանայ ...» (էջ 349—352): Զամոսցայի փոքր հայ գաղութին քահանայութեան իրաւունքը Սիմէոնին էր. իր բացակայութեան ժամանակ «այլք էին տիրապետել եւ ժառանգ եղեալ». այս մասին կը մատնոգուէր ինքը արդէն պանդխտութեան օրերուն:

1623ին ի Լվով սաստիկ ժանտամահ կը ճարակի: Շատերը կը փախչին քաղաքէն եւ կը ցրուին մերձաւոր եւ հեռաւոր գիւղաքաղաքներ. ոմանք կը հասնին մինչեւ Զամոսցա: Փախստականներէն զոմանս «եւ ես ընկալայ ի տունս իմ» կը գրէ Սիմէոն: Անոնք տեսնելով Սիմէոն գպրի աշխարհածանոթութիւնն եւ գրագիտութիւնը, մի եւ նոյն ժամանակ քաղաքացիներէն կրած հալածանքը, կը խոստանան իրեն միջնորդել Լվովցիներու քով, որ պաշտօնով հրաւիրեն զինքը Լվով. «մեք երթամք խօսիմք հետ ազգայից. եւ զքեզ առ մեզ բերցուք. դու մե՛զ լայեր